

Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ. Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2013, 198 էջ:

Մինչև ներկա դարասկիզբը հայրենների առումով կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Գիտական շրջանառության մեջ այսօր հայտնի է պատկառելի թվով մասնագիտական գրականություն,



սակայն հարկ է նկատել, որ դրանցում գերազանցապես արժարժվել են գրականագիտական հարցեր: Մանուկ Աբեղյանն առաջին հայ բանասերն է, որը, գրականագիտական հարցերից բացի, ուսումնասիրության նյութ դարձրեց հայրենների լեզվին, մասնավորապես բառապաշարին վերաբերող մի շարք հարցեր նույնպես:

1995 թ. Ա. Մնացականյանի կազմած «Հայրեններ» վերտառությամբ գիտական համահավաքը նոր իթան դարձավ հայրենների նորովի ուսումնասիրությունների համար: Ասվածի մասին են վկայում 2001 թ. լույս տեսած «Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը» գիրքը՝ Հրանտ Թամրազյանի աշխատասիրությամբ, և 2007 թ. Վանո Եղիազարյանի հրատարակած «Հայրենները», որոնք երկուսն էլ գրականագիտական ուսումնասիրություններ են:

2012 թ. երիտասարդ լեզվաբան Մ. Գ. Խաչատրյանը հրապարակային պաշտպանության ներկայացրեց հայրենների բառապաշարում տեղ գտած արաբական փոխառությունների մասին թեկնածուական ատենախոսությունը («Արաբական փոխառությունները հայրեններում և կաֆաներում»): Հրնթացս գիտական պարբերականներում տպագրվում էին Գ. Կ. Խաչատրյանի հոդվածները՝ նվիրված հայրենների լեզվաոճական առանձնահատկությունների համակողմանի քննությանը: Փաստորեն, Մանուկ Աբեղյանից շուրջ մեկ դար անց բացվում է հայրենների լեզվաբանական ուսումնասիրությունների նոր էջ՝ մի դեպքում՝ արաբական փոխառությունների համատեքստում, մյուս դեպքում՝ հայրենների լեզվաոճական և կառուցվածքային առանձնահատկություններին վերաբերող հարցերի քննությամբ:

Գ. Խաչատրյանի՝ վերջերս լույս տեսած «Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ» գիրքը՝ հայրենների հենց միայն լեզվաբանական քննության առումով ադեն իսկ նոր խոսք է: Գրքում տեղ գտած ուսումնասիրություններից ութը նախկինում տպագրվել են գիտական տարբեր հանդեսներում և ժողովածուներում, իսկ երկուսը լույս են տեսնում առաջին անգամ: Հոդվածները վերաբերում են հայրեններում կիրառված ոճաբանական զանազան հնարքներին՝ կոչականներին, հարանուններին, հատկանուններին, միակազմ նախադասություններին, ժամանակի քերականական կարգին, հայրենների սկզբնատողերին և այլն:

Միանգամայն ճիշտ է նկատում Գ. Խաչատրյանը գրքի ընդարձակ առաջաբանում. «Հայրենները մի բազմաշերտ զանձարան են, որտեղ ամբարված է մեր ժողովրդի ոչ միայն միջնադարյան հոգևոր հարստության, այլև մեր հնագույն և հին բանաստեղծական մտքի անհատնելի պաշարների մի արժեքավոր մասը» (էջ 5):

Հեղինակը լեզվական փաստերի ուսումնասիրությունից գալիս է այն հետևության, որ հայրենները ներկայացնում են միջին օղակ, որը, մի կողմից, կրում է իրեն նախորդած արժեքավոր գրականության ազդեցությունը, մյուս կողմից՝ ինքն է ազդեցություն թողնում «հայ բանաստեղծական մտքի զարգացման վրա» (էջ 6–8):

Գ. Խաչատրյանի համոզմամբ՝ հայրենները, գերակշիռ մասով լինելով ժողովրդական ստեղծագործություններ, պահպանել են հայ ժողովրդի հավաքական հիշողության և մտածողության մի շարք գոհարներ, որոնց մի մասը պատրաստի պատասխաններ են ցարդ առկախ որոշ հարցերի, մի մասն էլ առայսօր գործածվող արտահայտությունների, ժողովրդական որոշ հավատալիքների ակունքների մասին ուղղակի վկայություններ են (էջ 5):

Գ. Խաչատրյանը որպես ժողովրդի հավաքական հիշողության բնութագրական օրինակ բերում է «սև թուղթ» արտահայտությունը, որը, պարզվում է, ոչ թե անցյալ դարի Երկրորդ աշխարհամարտի ժամանակ է սկսել գործածվել, ինչպես սովորաբար ենթադրվում է, այլ ունի բազմադարյա հնություն և արտահայտվել է նաև հայրեններից մեկի մեջ.

*Հարց ու փորձ արի, թե խաբրիկ մ՝ առնեմ,
Սև խաբարն իտու, Սև թուղթն էր ձեռին (էջ 6):*

Իրավացի է լեզվաբանը, երբ, հետևելով բանասիրության մեջ իշխող տեսակետին, ընդունում է, որ հայրեններն ստեղծվել են տարբեր հեղինակների կողմից: Որպես իր իսկ կողմից արվող հիմնավորում այդ ընդհանրացող տեսակետի՝ նա մատնացույց է անում հայրեններում

նկատվող ոճական տարբերությունները, մասնավորապես հնարքների այն բազմազանությունը, որ առկա է բազմաթիվ հայրեններում:

Ուսումնասիրությունները գիտնականին բերում են նաև մեկ այլ եզրահանգման. հայրենների հեղինակները որոշակի վերաբերմունք են ունեցել հարանունների նկատմամբ, ինչն արտահայտվել է նրանց ստեղծագործություններում. հարանունների կիրառումով բանաստեղծական տողը ձեռք է բերում ներքին հանգավորում, որից շահում է նաև բանաստեղծության քնարականությունը: Լեզվաբանը նշում է հայրեններում հանդիպող հարանունների բազմաթիվ օրինակներ՝ դրանք դասդասելով երկու խմբում՝ համապատասխան ենթախմբերով՝ կից (դրանցից են՝ տողասկզբում, տողամիջում և տողավերջում հանդիպող հարանուններ), ոչ կից (այս դեպքում՝ ա/ հարանուններն ընդմիջարկվում են բանաստեղծական միևնույն տողով առնվազն մեկ բառով, բ/ հանդիպում են միևնույն տողի տողասկզբում և տողավերջում, գ/ հարանուններից առաջինը գտնվում է մի տողի սկզբում, երկրորդը՝ հաջորդ տողի վերջում, դ/ հարանուններից առաջինը հանդիպում է երկու կից տողերից առաջինի վերջում, երկրորդը՝ հաջորդ տողում, բայց ոչ վերջում, ե/ հարանունները հանդիպում են երկու կից տողերից յուրաքանչյուրի միջակա դիրքերում):

Գիտնականն առանձնակի մանրագնությամբ է դիտարկել հարցական նախադասություններ պարունակող հայրենները՝ նկատելով, որ հարցական նախադասությունները հայրեններին հաղորդում են կենդանի շունչ: Հատկապես սիրային հայրեններում հաճախ է հանդիպում (յ)է՛ր (ինչո՞ւ) հարցը, որը սիրող էականների գրույցում միանգամայն բնական է, քանի որ հերոսը ցանկանում է փարատել իրեն հուզող կասկածները, սիրեցյալի մասին իմանալ ամեն բան: Առանձին ուսումնասիրության նյութ են դարձել այն հայրենները, որոնք ունեն տարբերակներ: Սրանք այն ստեղծագործություններն են, որոնք՝ ա/ մեզ են հասել անփոփոխ. մեզ հասած հայրենի երկու օրինակներն ունեն միևնույն բառային կազմը, բ/ բովանդակությունն ու կառուցվածքն անփոփոխ պահպանելով՝ ենթարկվել են բառային կազմի մասնակի փոփոխությունների և մեզ հասել տարբերակներով, գ/ բովանդակության, կառուցվածքի, բառային կազմի (երբեմն՝ քերականական մասնակի շեղումներով) որոշ տարբերությամբ մնացել են անփոփոխ, դ/ վկայվել են միևնույն բառային կազմով ու բովանդակությամբ, սակայն կառուցվածքային փոփոխությունների ենթարկված:

Առանձնահատուկ արժեք ունեն հայրեններում հանդիպող հատկանուններին և հայրենների սկզբնատողերի կառուցվածքային առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրությունները: Սրանք իրենց բովանդակությամբ աննախադեպ հետազոտություններ են հայ բանասիրության մեջ: Գ. Խաչատրյանը կատարել է մի շարք հետաքր-

քիր դիտարկումներ, բացահայտել այն դեպքերը, երբ տարբեր ձեռագրերի մեջ միևնույն հայրենում առկա հատկանունը մի դեպքում փոխվում է, մյուս դեպքում՝ մնում անփոփոխ: Հատկանշական է, որ հատկանունները փոխվում են նույնիսկ այն հայրեններում, որոնք հեղինակային են, և որոնց հեղինակն ինքն է այդ մասին վկայում հայրենի մեջ:

Լեզվաբանը համարում է, որ հատկանունների «գործածությունը խոսքի մեջ ինքնանպատակ չէ: Մասնավորապես բազմաթիվ հայրեններում հատկանունների առկայությունը նպատակ է հետապնդում գեղարվեստական խոսքը ոճավորելու, որն առայսօր ուսումնասիրության նյութ չի դարձել» (էջ 176): Հետազոտությունը հեղինակին բերել է հետաքրքիր հետևության. հատկանուններ պարունակող հայրենները ժամանակային առումով ավելի ուշ շրջանի ստեղծագործություններ են: Գիտնականը վերջիններս բաժանել է երկու խմբի՝ ա) հայրեններ, որոնցում հատկանվան առկայությունն անհրաժեշտություն է, որովհետև առանց դրա հայրենի բովանդակությունը խաթարվում է և բ) հայրեններ, որոնցում հատկանվան առկայությունը պարտադիր չէ:

Գ. Խաչատրյանը նկատել է մի հետաքրքիր առանձնահատկություն ևս. «Որևէ մեկի կողմից հորինված հայրենում հիշատակված տեղանիշ հատկանունը տվյալ հայրենի այլ տարբերակում կարող է փոխարինվել մեկ ուրիշով» (էջ 188): Նշենք, որ այս և մնացած բոլոր դեպքերում իր կարծիքը գիտնականը հիմնավորում է բնագրային համապատասխան օրինակներով:

Հատկանշական է հետևյալ դիտարկումը: Այն հայրեններում, որոնցում արծարծվում է հոգին առնելու, հոգին տանելու թեման, գրողից բացի՝ գործածվում է Աստված հատկանունը կամ նրա որևէ համանիշը: Հայրեններում, ինչպես և այսօր, մարդկային ուժերից վեր և անհավանական գործողությունների կատարման համար նույնպես դիմում են Աստծուն.

Երթամ, աղաչեմ զԱստուած

Ղամագին ի գայ պատուհաս (էջ 178):

Գ. Խաչատրյանն առանձնացրել է աստվածաշնչյան մոտիվներով մի խումբ հայրեններ, որոնք գերազանցապես վերարտադրում են աստվածաշնչյան հերոսների խրատները, խորհուրդները, ինչպես՝

Ղաւիթ արքայի որդին Սողոմոն՝ զա՛յս մեզ կու ասէ.

– Զխրատն իմաստնոցն դու տուր, առաւել նա քեզ սիրէ.

Անգէտ, անիմաստ մարդոյն խրատ տասս՝ նա քեզ կատէ.

Թուր ու դանակ առնու, թէ կարնայ՝ նա սպանանէ (էջ 182):

Ժամանակի քերականական և գեղարվեստական արտահայտությունների ուսումնասիրությունը հեղինակին բերել է այն համոզման, որ դիմավոր բայերի գործածությունը հայրեններում միաժամանակ հետապնդում է գեղարվեստական խնդիրների լուծման նպատակ: Այդ հնարքով ապահովվում է գրողի և ընթերցողի ժամանակի զգացողության նույնությունը, որի շնորհիվ արծարծվող թեման բոլոր ժամանակներում մնում է արդիական:

Անշուշտ, գեղարվեստական երկի կատարելությանը նպաստել են նաև հայրեններում տեղ գտած համեմատությունները, որոնք այժի են ընկնում արտահայտության պլանի բազմազանությամբ:

Հայրենների բանատողերը ճիշտ չափերով կառուցելու համար դրանց հեղինակները դիմել են մի շարք եղանակների, որոնցից են՝ լեզվական միավորների հավելում, նվազեցում կամ մեկը մյուսով փոխարինում, որոնց արդյունքում բազմաթիվ բառեր, բառաձևեր և առանձին ձևույթներ հնչունափոխված կիրառվելով, բանաստեղծական տողաչափը դարձրել են անթերի:

Հայրենների սկզբնատողերի կառուցվածքային և ոճական առանձնահատկություններին անդրադառնալիս Գ. Խաչատրյանն իրավացիորեն նկատում է, որ «գետեղված լինելով առաջին պլանում՝ սկզբնատողը դառնում է այն հիմքը, որի վրա կառուցվում է հետագա ողջ ասելիքը: Այդ է պատճառը, որ ստեղծագործողի հատուկ ուշադրության առարկաներից մեկը սկզբնատողի կառուցվածքն է, այսինքն՝ հաղորդակցական միավորն իր շարադասական, հնչերանգային և այլ առանձնահատկություններով» (էջ 158):

Հայրենների սկզբնատողերի ոճական ձևավորման առումով հեղինակը նշում է դրանցում հանդիպող անձնավորման, փոխաբերության և այլ ոճական հնարքների բազմաթիվ բնագրային օրինակներ: Լեզվաբանն առանձնացնում է հոգնակի թվի երրորդ դեմքով արտահայտված՝ գերադաս անդամ ունեցող ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններով կազմված սկզբնատողերով հայրենները. դրանցում նշված կառուցվածքն օգնում է գործողությունը վերագրելու ցանկացած մարդու, իսկ այս հնարքի միջոցով հայրենի հեղինակն անմիջական հաղորդակցության մեջ է մտնում բոլորի հետ:

Գ. Խաչատրյանի կարծիքով՝ հետաքրքիր լուծումներով այժի են ընկնում հերոսների երկրորդ և երրորդ դեմքերով արտահայտված սկզբնատողերը կամ առանձին հատվածները, որոնք տարբեր փոփոխակներով հանդիպում են բովանդակությամբ տարբեր հայրեններում: Կան սկզբնատողեր, որոնք նույնությամբ կրկնվում են մի շարք հայրեններում: Վերջիններս իրարից տարբերվում են՝ երկրորդ տողից սկսած: Մի շարք հայրեններում սկզբնատողերի միայն առաջին բառն է

նույնությամբ կրկնվում, մինչդեռ մինչև տողավերջ (և դրանից հետո) այդ հայրեններն ունեն իրարից տարբեր շարունակություն: Որոշ հայրեններում միայն սկզբնատողի սկզբում գործածված կոչականի արտահայտության պլանն է տարբեր լուծումներ ստացել, մինչդեռ ն' սկզբնատողի շարունակությունը, ն' մնացյալ բոլոր տողերը կրկնվում են նույնությամբ (էջ 166–168):

Հայրենների սկզբնատողերի կառուցվածքային և ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությունից լեզվաբանը եզրակացնում է, որ երկրորդ դեմքով արտահայտված սկզբնատողերով հայրենները ասելիքի ընդհանրացման լավագույն միջոց են, որովհետև այսպիսով խոսքը դուրս է գալիս մասնավորի շրջանակներից և օժտվում վերագրման անսահմանափակ հնարավորությամբ (էջ 170):

Գ. Խաչատրյանի աշխատությունը հիրավի նոր խոսք է հայրենների ուսումնասիրման բնագավառում. նրանով սկիզբ է դրվում հայ միջնադարյան գրականության հարուստ գանձարանի չքնաղ նմուշներից հայրենների լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ,
ԱԼԲԵՐՏ ՊՈՂՈՍՅԱՆ